Ազգ
Azg
19 ՄԱՅԻՍ 2005 ՀԻՆԳՇԱԲԹԻ 90 (3256)

Հայաստանի ... գրադարան

# Հայաստանում «թավշյա» հեղափոխությունը հասունացե՞լ է

Ռուսաստանի ազգային ռազմավարության ինստիտուտի ղեկավար, քաղաքագետ Ստանիսլավ Բելկովսկին կազմել է ԱՊՀ երկրներում «թավշյա» հեղափոխությունների հաջողականության գրաֆիկը: «Ռեգնում» գործակալության հաղորդմամբ, նա առանձնացրել է այն երկրները, որոնցում հասունացել են հեղափոխության համար անհրաժեշտ պայմանները: Ըստ նրա, այդ երկրները բաժանվում են 3 ռիսկային խմբերի, ամենաբարձրի մեջ են մտնում Հայաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը եւ Տաջիկստանը:

Նա կարծում է, որ Ուզբեկստանում կիրառված ուժային ճնշումը հետաձգեց հեղափոխությունը եւ այնտեղ պետական հեղաշրջում տեղի կունենա 2 տարի անց: Ներկա պահին «թավշյա» հեղափոխության համար իդեալական պայմաններ են ստեղծվել Հայաստանում: Ռիսկային երկրորդ խմբի մեջ են Ռուսաստանն ու Ադրբեջանը, երրորդում` Բելառուսն ու Թուրքմենիան:

Ռ. Պ.

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Համանախագահները հանդիպումների համատեղ գրաֆիկ են կազմել

ՎԱՐՇԱՎԱ, 18 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 15-ին Վարշավայում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման արդյունքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովը (Ռուսաստան), Ստիվեն Մաննը (ԱՄՆ) եւ Բեռնար Ֆասիեն (Ֆրանսիա) հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: «Ռեգնում» գործակալությունում ստացված փաստաթղթում նշվում է. «Եվրոպայի խորհրդի գագաթաժողովի նախօրյակին մայիսի 15-ին Վարշավայում Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո կայացավ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում: Համանախագահներին միացան Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը եւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Միշել Բառնիեն, ելույթ ունենալով հանդիպման բացմանը եւ իրենց պետությունների անունից աջակցություն հայտնելով Մինսկի խմբի գործունեությանը եւ նվիրվածություն ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը: Համանման նկատառումներ ԱՄՆ-ի անունից արտահայտեց դեսպան Ս. Մաննը:



ARMENPRESS

Երկու ժամ պետությունների ղեկավարները բանակցություններ վարեցին մեն-մենակ: Այդ ժամանակամիջոցում համանախագահները քննարկումներ անցկացրին Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ: Վերջում երկու երկրների նախագահները համանախագահներին ծանոթացրին իրենց նկատառումներին եւ եզրակացություններին: Նրանք հաստատեցին լուրջ շահագրգռվածություն` բանակցությունների ճանապարհով հասնելու հակամարտության խաղաղ կարգավորման: Երկու պետությունների արտաքին գործերի նախարարներին ցուցումներ տրվեցին շարունակելու փոխգործակցությունը համանախագահների հետ այն դրական արդյունքների հիման վրա, որոնք ձեռք են բերվել անցած տարի «Պրահյան գործընթացի» շրջանակում կայացած բանակցությունների ընթացքում, հասնելու համար կարգավորման փոխընդունելի առաջարկների մշակման: Ներկայումս համանախագահները կազմում են կողմերի հետ կոնսուլտացիաների գրաֆիկ առաջիկա ամիսների համար»:

ՀԱԿԻՐՃ

# Թբիլիսիում Բուշի վրա նետված նռնակը մարտական է եղել

Թբիլիսիի Ազատության հրապարակում Մ. Նահանգների նախագահ Ջորջ Բուշի վրա մայիսի 10-ին նետված նռնակը եղել է մարտական, սակայն չի պայթել հարվածային մեխանիզմի թույլ գործելու պատճառով: Դաշնային հետախուզության բյուրոյի նախագահ Բրայան Պարման երեկ հայտնել է, որ ներկա պահին ամերիկացի եւ վրացի փորձագետները լաբորատոր խիստ պայմաններում զննում են նռնակը, որից հետո կներկայացնեն հաշվետվությունը:

«Մեր կարծիքով, նռնակը վտանգավոր է եղել թե՛ Մ. Նահանգների եւ Վրաստանի նախագահների, թե՛ հրապարակում հավաքված մարդկանց կյանքի համար», հայտարարել է նա:

# Ռուսաստանը ռազմական բազաները դուրս կբերի 2008 թվականին

Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Յակովենկոն երեկ հայտարարել է, որ Վրաստանից ռազմական բազաները դուրս բերելու բանակցություններում իրենք շարունակելու են պնդել, որ դա տեղի ունենա 2008 թվականից ոչ շուտ:

Ռուսաստանն առաջարկել է բանակցությունների նոր փուլ սկսել Թբիլիսիում, մայիսի 23-ին: Յակովենկոն նշել է, որ ռազմական բազաները ավելի վաղ դուրս բերելու վերաբերյալ վրացական կողմի հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը:

# Վրաստանում ԱՄՆ նոր դեսպանն է Ջոն Թեֆթը

ԹԲԻԼԻՍԻ, 18 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ջորջ Բուշը Վրաստանում ԱՄՆ նոր դեսպան է նշանակել Ջոն Թեֆթին, հաղորդում է «Ռուսթավի 2» հեռուստաընկերությունը: Թեֆթը այդ պաշտոնում կփոխարինի Ռիչարդ Մայլզին, որի Վրաստանում գտնվելու ժամկետը սպառվել է: Նախնական տեղեկատվությամբ, նոր դեսպանը Վրաստանում իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ կլինի ընթացիկ տարվա օգոստոսին: Երկու օր անց նրա թեկնածությունը կհաստատի ամերիկյան կոնգրեսը:

2004 թվականի ամառվանից Թեֆթը ԱՄՆ-ի պետքարտուղարի Եվրոպայի եւ Ասիայի հարցերի գծով օգնականն է: Նա տնօրինում էր ամերիկյան փոխհարաբերությունները Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի եւ Բելառուսի հետ: Նա եղել է նաեւ ԱՄՆ-ի դեսպանը Լիտվայում, աշխատել Մոսկվայի ամերիկյան դիվանագիտական առաքելությունում:

# «Միկան» ցանկանում է դառնալ «Արմավիայի» ամենամե՞ծ բաժնետեր

Ավիացիոն շրջանակներում վերջին ժամանակներս համառ լուրեր են պտտվում, թե «Միկա» ընկերության նախագահ Միխայիլ Բաղդասարովը բանակցություններ է վարում «Արմավիա» ընկերության խոշոր բաժնետեր «Սիբիր» ավիաընկերության հետ: Ըստ այդ տեղեկությունների, պրն Բաղդասարովը ցանկանում է մեծացնել «Արմավիայում» իր ունեցած բաժնետոմսերի բաժինը` դառնալով միակ խոշոր բաժնետերը:

«Ազգը» փորձեց ստուգել տեղեկությունը, սակայն ոչ «Արմավիայի», ոչ «Միկայի», ոչ «Սիբիրի» պատասխանատուների հետ չհաջողվեց կապվել: Առաջին երկու ընկերությունների առաջին դեմքերը, ըստ իրենց իսկ գրասենյակներից ստացված տեղեկության, բացակայում էին հանրապետությունից, իսկ «Սիբիրի» դեպքում չհաջողվեց կապվել ընկերության մամուլի բաժնի ղեկավարի հետ` վերջինիս զբաղվածության պատճառով:

Ամեն դեպքում, «Ազգը» կշարունակի հետեւել այս տեղեկության վերաբերյալ լուրերին` հետագայում նոր մանրամասներ ներկայացնելու ակնկալիքով, հատկապես որ մեզ խոստացան, որ Միխայիլ Բաղդասարովի Հայաստան վերադառնալու դեպքում մեր հարցումն անպայման կփոխանցվի նրան:

Ա. Հ.

# Ինչպես Զորի Բալայանը փրկվեց ծովում խեղդվելուց

«Կիլիկիա» նավից 30 մետր հեռու կանգնած Զորի Բալայանը` գրքերով լի տոպրակը ձեռքին, գրպաններում` 2 բջջային հեռախոս, մեկը իտալական քարտով, մյուսը` ռոումինգով, սպասում էր մոտեցող նավակին: Երիտասարդ նավաստի Վահագն Մաթեւոսյանը նավակը նրան մոտեցնելու համար դեռ չէր հասցրել բռնել շղթան, Բալայանը ոտքը հանգիստ դրեց նավակի վրա, միանգամայն վստահ, որ շղթան Վահագնի ձեռքում է: Նավակը կտրուկ հեռացավ պատից եւ Կոմիսարը հայտնվեց սառը ջրում: Ամեն ինչ այնքան անսպասելի էր, որ ոչ ոք նրա ընկնելը չնկատեց: Բայց մեկ վայրկյան անց լսվեց նրա բղավոցը. «Վահագն ջան, այդ ինչ արեցիր, դու իմ 2 ձեռքերը կտրեցիր, ես ջրի մեջ թողեցի իմ 2 հեռախոսները»: Կողապատից բռնվելով նա հանեց իր 2 հեռախոսները եւ գցեց նավակի մեջ, սակայն դրանք արդեն պիտանի չէին: Հայտնի բան է, որ աղաջուրը ճապոնական սարքերի թշնամին է:

Ցավոք, Կոմիսարի «խեղդվելու» տեսարանը չնկարահանվեց, քանի որ «Կիլիկիա» նավի վրա չէր Սամվել Բաբասյանը` իր տեսախցիկով, իսկ լուսանկարչական ապարատ ունեցողները գլխի ընկան միայն այն ժամանակ, երբ նավակն արդեն հասել էր «Կիլիկիային», իր հետ բերելով Կոմիսարին:

Խեղճ Վահագնը այնպես էր սփրթնել, որ մինչ հանում էինք «խեղդվածի» հագուստը ու նրան ծածկում վերմակով, Կոմիսարը հանգստացնում էր վախեցած Վահագնին ասելով. «Վահագն ջան, ես քաղաքում գործեր ունեմ, այնպես որ, հենց դու ես ինձ քաղաք տանելու: Ամեն ինչին պետք է փիլիսոփայորեն նայել, վերջին հաշվով, դու ինձ փրկեցիր»:

ԱՐՄԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ

Իտալիա

# Աբբասն ունի Պաղեստինի ստեղծման սեփական ծրագիր

Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը հայտարարել է, որ պաղեստինցիներն ունեն անկախ պետություն ստեղծելու սեփական ծրագիր: Պետական այցով Չինաստան մեկնած Աբբասն այդ մասին պատմել է «Սինհուա» գործակալությանը տված հարցազրույցում, սակայն մանրամասնություններ չի նշել:

Նրա խոսքերով, մերձավորարեւելյան խնդրի կարգավորման միջնորդների ներկայացրած «Ճանապարհային քարտեզը» լրիվ չափով չի իրականացվում Իսրայելի ղեկավարության «ծածկամտության եւ կեղծարարության» պատճառով:

Մահմուդ Աբբասը միաժամանակ ողջունել է հուլիսի 17-ին Պաղեստինի օրենսդիր ժողովի ընտրություններին մասնակցելու «Համաս» արմատական շարժման որոշումը: Նրա խոսքերով, «Համասի» այդ քայլը վկայում է, որ իսլամիստները պատրաստակամ են միանալու Պաղեստինյան ինքնավարության քաղաքական համակարգին:

Պ. Ք.

# Տապալե՛լ Լուկաշենկոյին. Եվրոխորհրդի գագաթաժողովի ազդանշանը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Վարշավա

Մինչ «Արքայական ամրոցում» Եվրոխորհրդի անդամ մի շարք երկրների նախագահներ օրակարգի հարց էին դնում Բելառուսի ժողովրդավարացումն ու Ալեքսանդր Լուկաշենկոյի վարչակարգի տապալման անհրաժեշտությունը, Վարշավայի փողոցներում հավաքված շուրջ հազար անարխիստներ բողոքի ակցիաներով դատապարտում էին Եվրոպայի «ամենամեծ» քաղաքական կազմակերպության գործունեությունը:



Անարխիստները պնդում են` Եվրոխորհուրդն անպետք, թանկ եւ բյուրոկրատական կառույց է, որի գործունեությունն արդյունքներ չի տալիս: Լեհ եւ այլազգի անարխիստները կարծում են, որ Եվրոխորհրդի ընդունած փաստաթղթերն «անհեթեթ ակտեր» են, իսկ կազմակերպության ֆունկցիոներները` «շիզոֆրենիկներ ու երկերեսանիներ»:

Եվրոխորհրդին չանդամակցող Բելառուսի անմիջական հարեւան բոլոր պետությունների ղեկավարները, բացառությամբ Ռուսաստանի, կազմակերպության 3-րդ գագաթաժողովում առաջնային խնդիր էին համարում Ալեքսանդր Լուկաշենկոյի բռնապետական վարչակարգի տապալումը:

Լատվիայի նախագահ Վայրա Վիկե-Ֆրեյբերգան Լուկաշենկոյին անվանեց «Եվրոպայի վերջին դիկտատոր»` հույս հայտնելով, որ «մի օր Բելառուսը միանալու է ժողովրդավարությունների մեր համայնքին»:

Լիտվայի նախագահ Վալդաս Ադամկուսը Բելառուսը համարեց «գորշ տարածք եվրոպական ժողովրդավարությունների քարտեզում»: Նա համոզմունք հայտնեց, որ անհրաժեշտ է «օժանդակել բելառուս ժողովրդին բաց եւ ժողովրդավարական հասարակություն կառուցելու» հարցում:

Նույն ոգով արտահայտվեցին Էստոնիայի ու Լեհաստանի առաջնորդները, Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին ու Եվրոխորհրդի բարձրաստիճան չինովնիկները: Ի դեպ, Եվրոխորհուրդը «շիզոֆրենիկների եւ երկերեսանիների» կազմակերպություն համարող անարխիստները եւս քննադատում էին Լուկաշենկոյին: Նրանք բողոքում էին, որ Եվրոխորհրդի անդամ Թուրքիայում եւ Ռուսաստանում դաժանաբար ոտնահարվում են քրդերի ու չեչենների իրավունքները, իսկ եվրոպական մի շարք պետություններ ԱՄՆ-ի գլխավորությամբ շարունակում են անմարդկային գործողություններն Իրաքում:

Տես էջ 2

